



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ո Ւ Մ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՄԵԶ

1955 թվականի գեկանմբեր 4-ին, Պլեյֆի սրահին մեջ, պատվո նախագահությամբ Ֆրանսայի Ազգային ժողովի պատվո նախագահ Էղուոյի և նախագահությամբ նախակին նախարար Ժողովական Գոդարի, փարիզահայ զաղութքը մեծ խանդավառությամբ և հանդիսավոյամբ տանեց Սովետական Հայաստանի 35-րդ փառապանծ տարեդարձը:

Հանդեսի կազմակերպության կմասնակցերին Ֆրանսահայ մշակութային միությունը, Ֆրանսահայ երիտասարդաց միությունը (ԺՄՖ), Հ. Մ. Մ.-ը և քաղաքաթիվ ֆրանսացի և հայ հայմինասեր անձնափորություններ:

Մրանի թեմը զարդարված էր Սովետական Միության, Ֆրանսական և Սովետական Հայաստանի դրոշականերով և հետեւալ վերտառություններով. «Եցցը՝ Սովետական Հայաստանի 35-րդ փառապանծ տարեդարձը», «Փառ Ս. Էցմիածնին և ողջ լին նորբեսիր Կարողիկոս Վազգեն Ա.-ին»:

Բնեմին խորը մեր Հայրենիքին այգիները ներկայացնող երկու հակա ողկույզներու և տերեմներու մեջն բարձրացող Մասիսներուն վրա կտեսնվեին երկու աղակուններ, որոնք կմարմացնեին մեր ժողովուրդին խաղաղության իդք, ձգտումը:

Սահմանադրություններու տակ թեմ հրավիրվեցավ նախագահական կազմը, որուն մաս կկազմեին Ժյուստեն Գոդար, օրվան նախադահը, Ֆրանսայի սովետական Հյուպատոս Միքայել Գուցինդոն, Զեխոսովիալյան դեսպանատան դիմական կինովրական կցորդ Ալլալիկ և տիկինը, Ֆրանսայի Հունգարական Հյուպատոս Ժորժ Հելեր, Փարիզի արվարձաններնեւ Բանիոյի բաղարապահ Պրոտի և տիկինը, Պիեռ Փարաֆ, Հ. Մ. Մ.-ի ընդհանուր քարտուղար Մերոն, Ասատրյան և Կյուտի առաջնորդ, Ֆրանսայի Ասատրյան և Կյուտի մայոր, Ֆրանսահայ մշակութային միության նախագահ Ս. Ակորավ, Ֆրանսահայ երիտասարդաց (ԺՄՖ) միության նախագահ Գ. Սողոմոնյան, փաստարան Բարսիլյան, գրադետ Լեոն Մու-

սինակ, րանաստեղծ Ռ. Մելիք, գնդապետ Ֆավրը, պրոտ. Թօրոսյան, դաշնականար Բաֆֆի Պետրոսյան, Արդիշ Հայկանուշ Թորոսյան, նկարիչ Շահնազարյան, երգիչ-երգահան Ժակ Դակ:

Սովետական Հայաստանի 35-րդ փառապանծ տարեդարձին նվիրված այս հանդեսին ներկա էր հայ և տար ավելի քան 3.000 հոգի, մինչ շատեր ալ տարի մնացին տեղի չգոյնության պատճառով:

Հանդեսը բացվեցավ Ֆրանսական, Սովետական և Հայկական հմաներու երգեղուցությամբ, ապա նախագահ Ժյուստեն Գոդարի բացման խոսքին մեջ արտահայտեց հավաքութին և ֆրանսահայ զաղութքին նկատմամբ իր սերմու հարգանքը և հայ ժողովուրդին նկատմամբ իր հացառումը, շետո խոսքը տված Ֆրանսահայ մշակութային միության նախագահ Ս. Ակորավին, որ կանգ տանձով նոյեմբերի 29-ի պատճական նշանակության և մեր ժողովուրդին բերած անսահման բարիքներուն և նվաճումներուն վրա, շեշտեց ուսւ մեծ ժողովուրդին անշահմանդիր օժանդակությունը հայ ժողովուրդին և մեր երկու ժողովուրդներու միջև ստեղծված անխախտ եղացաւությունը:

Նախագահին հրավերին տեղի տալով, ժողովուրդին ժափառության մեջ խոր առավ սովետական Հյուպատոս Միքայել Գուցինդոն, որ սովետական դեսպան Վինոգրադովի և ֆրանսարնակ բոլոր սովետական քաղաքացիներու անունավ շնորհագործել վերջ Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձը, ավելցուց, որ նոյեմբերի 29-ը ո՛չ միայն հայերու, այլև սովետական բոլոր ժողովուրդներու կողմեն կտոնվի այսօր. Սովետական ժողովուրդներու միջև աղքային հարցին ամենադիմոկրատական ձևով լուծումը, ըսավ Հյուպատոսը, պատմության մեջ առաջին անգամ ըլլալով կարելի եղավ միայն Հոկտեմբերյան Մեծ հաղափոխության շնորհիվ, և ժո-

գովուրդներու ինքնորոշման իրավունքներու հայտարարութեան է, որ փառապանծ հայ ժողովուրդն ալ կարելիություն ստացավ նվաճելու իր ազատությունն ու անկախությունը և ծաղկելու բոլոր մարզերու մեջ Ապա հյուպատուր անդրադարձավ այն անշահախնդիր օժանդակության, որ հայ ժողովուրդը իր պատմության ճակատագրական օրերուն մեջ ստացավ ուսւ մեծ ժողովուրդին և մյուս բոլոր սովնետական ժողովուրդներնն: Սովնետական Հայաստանի մեջ աեղի ունեցած հառաջդիմություններուն նկատմամբ առվետական լուրոր ժողովուրդներու ուրախությունն ու հպարտությունը արտահայտելի վերջ, հյուպատուր խոսքը ավարտեց ըսկելով. «Կեցցե՛ Սովնետական Հայաստանի 35-րդ տարեկարձը, կեցցե՛ Սովնետական Միությունը»:

Ապա խոսք առավ Ֆրանսահայ երիտասարդաց միության նախագահ Գ. Սողոմոնյան, որ նախ խոսեցավ իր Հայրենիք այցելության թանկագին առավորություններու մասին, մասնավորաբար հիշեց, որ Սովնետական Միության մեջ ամեննեն շատ լած րարոր եղած է «միիր՝ «ինազաղություն» բառը, որ հայ աղջնակի մը կողմն իրեն նվիրված աղավնիի մը կերպարը կրող պատիկ մեղալի մը վրա գրված էր «Կեցցե՛ խաղաղությունը»: Մեր Հայրենիքը, ըսավ Սողոմոնյան, սովնետական ժողովուրդներու եղբայրության և փոխադարձ անշահախնդիր օգնության շնորհիվ ոչ մեկ բանի պետք ունի բացի խաղաղության ամրապնումն, որ մեր բոլորին, բոլոր աշխարհի ժողովուրդներուն գործն է: Հետո անդրադառնալով Ս. էջմիածնի կութողիկոսական ընտրության, նա կանդ առավ մեր բազմադարյան մշակույթի շահակիր Ս. էջմիածնի՝ մեր ժողովուրդին ազգապահանան հարցին մեջ ունեցած կարեւորդերին վրա: Հետո խոսքը ուղղելով ֆրանսահայ երիտասարդության, ըսավ, որ մեր Մայր Հայրենիքը և Ֆրանսան լավագույնս սիրել կարելի է միայն պաշտպանելով խաղաղությունը:

Նախագահ Ժյուստեն Գոդար իր փակման խոսքին մեջ անդրադարձավ հայ և ֆրանսացի ժողովուրդներու եղբայրության և շեշտեց ֆրանսահայ գաղութի բերած սրտառուշ օժանդակությունը Ֆրանսային, ապա եղբակացուց, որ հայ ժողովուրդը, բազմադարյան իր մշակույթի պատուղը տալի վերջ բոլոր ժողովուրդներուն, այսօր Արարատի հանեն աղավնի մը կթոցնե դեպի աշխարհի ժողովուրդները: Հարգելի նախագահը մեր ժողովուրդի խաղաղասիրական ձգտումը բնորոշեց որպես դարավոր տառապանիք և բնաշնչման նպատակով եղած փորձերուն դեմ

հայ ժողովուրդին ապրելու կամքի վճռականությունը և անդրադառնալով Կոստանդնուպոլիսու 6—7 սեպտեմբերի դեպքերուն, ցուց տվավ Թյուրքիու մեջ հայության դեմ տակավին շարունակվող հալածանքը և անդրադարձավ այն մասին, թե միջազգային խաղաղության պահպանումը որքան կենսական կարևորություն ունի հայ ժողովուրդին և բոլոր ժողովուրդներուն համար:

Նախագահը ապա հրապարակեց նոյեմբեր 29-ի առթիվ ղրկվելիք շնորհակորական ուղերձները Ֆրանսական Հանրապետության նախագահ Ռին Գոտիին, Հայկական ՍՍՌ Մինիստրներու Սովետի նախագահ Ա. Քոչինյանին, Ֆրանսական Ազգային ժողովի և օրվան հանգիստությանց պատվու նախագահ Էդուար էփոյիին, Ամենայն Հայոց Կաթողիկոս նորին Ս. Օծություն Վազգեն Ա.-ին, Արտասահմանի հետ կուտուրական կապի Հայկական ընկերության նախագահին: Այս հայտարարությունը ընդունվեցավ բուռն ծափահարությամբ: Եվ երբ Ժյուստեն Գոդար հրապարակեց Սովետական Միության Միություններուն Սովետի առաջին փոխնախագահ Անդրեասի կողմէն կապահանգիստ նախագահին: Այս կապահանգիստը ներկաները հոտընկայաց ծափահարություններով ողջունեցին այն և սրահը անգամ մը ևս թնդաց խանդավառ ծափահարություններով:

Հանդեսի վերջացավ գումար ծագելիունչեր ստացան սովնետական հյուպատուն ու նախագահ Ժյուստեն Գոդարը: Ժողովուրդին խելածել ծափահարություններուն մեջ նախագահը ստացավ նաև Հայաստանի կոնյակ և Հայաստանին ստացված փոքրիկ սափուրը մը:

Այսպես վերջացավ հանդեսին պաշտոնական մասը, որուն հաջորդեց գեղարվեստական բաժինը, որուն իր մասնակցությունը բերավ «Նախիք» երգախոսությունը՝ վեկավարությամբ Գ. Ցանկելյանի և մեներգներով երգի և երգահան ժակ Գալի: Մասնավոր գնահատմանի արժանացավ Գ. Սարյանի գրած և Ա. Սաթյանի գաղնավորած «Խաղաղության երգը»:

Գեղարվեստական բաժնին վերջին մասը կկազմեր «Էնոնային լճի գալանիթը» անուն հայկական գումավոր ֆիլմին ցուցադրությունը, որ արժանացավ ներկաներու բարձր գնահատության:

Սովնետական Հայաստանի 35-րդ տարեդարձը տոնվեցավ Ֆրանսայի հայարձնակ շրջաններեն տասնըշորս տարրեր վայրերու մեջ մեծ խանդավառությամբ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԾ ՄԻՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ